ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳՈՌ ՎԱՀԱՆԻ

ԴԻԶԱՅՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԲՈՒՀ-ՈՒՄ

ԺԳ.00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա /կերպարվեստ/»
Մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Լեմս Սուրենի Ներսիսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Անուշ Կարապետի Եղիազարյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Արայիկ Արշալույսի Պողոսյան**

Առաջատար կազմակերպություն՝ Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026թ. մայիսի 21–ին, ժամը 12:00–ին՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ-ի ապրիլի 20–ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Թերեզա Յուրիի Ազատյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը

Ժամանակակից գիտակրթական բնագավառում գեղարվեստական կրթության պայմանները որոշարկելու համար անհրաժեշտ է ճշտել հասարակության գեղարվեստական ձևավորման որոշ բնութագրեր, կարևորելով դրա դերը անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման բնագավառում: Արդի հանրակրթությունն այսօր փորձում է նորովի լուծել գեղարվեստական կրթության և դաստիարակության հիմնախնդիրները, կիրառելով ինչպես եղած փորձը, այնպես էլ՝ մշակելով նոր պայմաններ, մեթոդներ, միջոցներ:

Հիմք ընդունելով հանրակրթական պետական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատության «Արվեստ և արհեստ» ուսումնական առարկայի չափորոշիչն ու ծրագիրը՝ լրամշակված «Հանրակրթության մասին ՀՀ օրենքի», «Հանրակրթության պետական կրթակարգի», «Հանրակրթության պետական չափորոշիչների» /ՀՀ կառավարության 2020 թ. որոշում/ հիման վրա, խնդիր է դրվում համապատասխան գիտելիքներով զինված ուսուցիչներ պատրաստելու պահանջարկը: Ահա ինչու սույն հետազոտության հիմքում ընկած են գեղարվեստական կրթության բնագավառում «Դիզայն առարկայի» ուսուցման մեթոդիկայի մշակման արդի խնդիրները, դրանց մեթոդաբանական ու տեխնոլոգիական իմաստավորումը: Կարևորելով թեմայի արդիականությունը, փորձ է արվել բացահայտել գեղարվեստական կրթության բնագավառում դիզայնի տեսագործնական և գեղարվեստաստեղծագործական մոտեցումների խնդրում առկա բացթողումները, մշակել գեղարվեստական նախագծումների, գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ձևերի, մեթոդների, միջոցների, տեխնոլոգիաների համալիր և սահմանել դրա արդյունավետ կիրառման մեթոդական համակարգ: Քանի որ դիզայնի ուսուցման գործընթացի և դրա հետ կապված մանկավարժահոգեբանական ախտորոշումը բավարար չափով չի ուսումնասիրվել մեթոդական գրականության մեջ, չեն բացահայտվել այն հիմնական գործընթացները, մանկավարժական պայմանները, միջանկյալ և վերջնական արդյունքները, որոնք պատկերացում կտան տվյալ ոլորտում ուսումնական գեղարվեստամանկավարժական հնարավորությունների վերաբերյալ:

Ելնելով ապագա նկարիչ-մանկավարժների դիզայներական կարողությունների ձևավորման անհրաժեշտությունից, գտնում ենք, որ սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է.

1. «Դիզայնի» հատուկ վերամշակված դասընթացը, ՀՊՄՀ «Գեղարվեստական կրթության» ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական ծրագրերում ներառելու պահանջվածությամբ:

2. Գեղարվեստական կրթության շրջանակներում դիզայն, հետայսու՝ «Մանկավարժական դիզայն» դասընթացի մեթոդական համակարգի

մշակման անհրաժեշտությամբ, որը կնպաստի մանկավարժական ԲՈՒՀ-ի ուսանողների դիզայներական կարողությունների արդյունավետ ձևավորմանը։

Հետազոտության նպատակը - Գեղարվեստական կրթության բնագավառում «Դիզայն» առարկայի արդյունավետ մեթոդիկայի մշակումն է։

Հետազոտության օբյեկտը - Գեղարվեստական կրթության ֆակուլտետում «Դիզայն» առարկայի ուսուցման գործընթացն է։

Հետազոտության առարկան - Գեղարվետական կրթության ֆակուլտետում «Դիզայն» առարկայի ուսուցման մեթոդիկան է։

Հետազոտության գիտական վարկածը - Գեղարվեստական կրթության ֆակուլտետում «Դիզայն» առարկայի ուսուցման գործընթացում ուսանողների կողմից տեսագործնական և մասնագիտական գիտելիքների յուրացումն արդյունավետ կիրականանա, եթե.

- Կրթական գործընթացում ուսանողների նկատմամբ իրականացվի մանկավարժական կողմնորոշված մոտեցում՝ «մանկավարժական դիզայն» հասկացության հիմնավորմամբ։
- Իրականացվի մանկավարժի և ուսանողների համատեղ գեղարվեստանախագծային աշխատանքի կազմակերպում, որը կդիտարկվի, որպես մշակութային հաղորդակցման միջոց։
- Նպատակաուղղված կիրառվեն ուսանողների դիզայներական գործունեության կազմակերպմանը նպաստող ժամանակակից մեթոդական համակարգ։
- Մշակվի մանկավարժական դիզայն առարկայի միջոցով ուսանողների մասնագիտական որակների ձևավորմանն ուղղված մանկավարժի գործունեության մոդելը։
- Սահմանվեն մանկավարժական դիզայնի տեխնոլոգիաների կիրառման գործընթացում ուսանողների գեղարվեստական նախագծումների կարողությունների ձևավորվածության մակարդակներն ու դրանք որոշող չափանիշներն ու ցուցանիշները։

Ըստ նպատակադրման և առաջ քաշված վարկածի առաջադրվել են հետևյալ **Խնդիրները** - Ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ առկա հետազոտություններն ու համապատասխան գիտական աղբյուրները, գեղարվեստական կրթօջախների փորձը, դիզայներական դասական և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներն ու համակարգչային տարաչափ ծրագրերը։

- Մշակել և ուսումնական գործընթացում ներդնել դիզայներական տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողների տեսագործնական կարողությունների ձևավորման մեթոդական համակարգը։
- Մշակել մանկավարժական դիզայն առարկայի միջոցով ուսանողների մասնագիտական որակների ձևավորմանն ուղղված մանկավարժի գործունեության մոդելը։
- Անցկացնել մանկավարժական դիզայնի ինտերֆեյսի մշակման ուսուցման

սկզբունքների, մեթոդների, կազմակերպման ձևերի վերլուծություն:

- Անցկացնել մանկավարժական գիտափորձ՝ արդյունքներով հիմնավորել մշակված մանկավարժական դիզայն առարկայի մշակված մեթոդական համակարգի արդյունավետությունը բուհական կրթության բնագավառում:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, մանկավարժական, հոգեբանական, արվեստագիտական, մեթոդական հետազոտությունները, տեսությունները, հայեցակարգային մոտեցումները, դիզայներական նախագծումները և ուսումնական գործունեության տեսությունը: Տեսական հիմք են կազմել նաև արվեստի և թվային պատկերների տեսությունը և պատմությունը, ինտերֆեյսների անկետավորման կիրառելիության մեթոդական մշակումները, տեղեկատվության ինտեգրատիվ ազդեցության գործոնների և տեղեկատվության ստացման և աղբյուրների միջոցների փոխադարձ կապի վրա հիմնված մոդելները: / Լ.Ս. Ներսիսյան, Մ.Ա. Մկրտչյան, Լ.Ս. Երիցյան, Գ.Լ. Եղիազարյան, Ա.Կ. Եղիազարյան, Հ.Մ. Մուկուչյան, Դ.Վ. Քերթմեջյան, Դանիլովա Ա.Գ., Դորֆման Լ.Յա., Կատխանովա Յու.Ֆ., Կուզին Վ.Ս., Լավրենտև Ա.Ն., Մառչենկո Մ.Ն., Պետրուշին Վ.Ի., Սուդնիկովա Տ.Դ., Ուստին Վ.Բ., Աբրահամ Մ., Գ. Նելսոն և այլք/:

Հետազոտության մեթոդները - Տեսական՝ հոգեբանական, մանկավարժական, մեթոդական, արվեստագիտական, մասնագիտական գրականության ուսումնասիրում և վերլուծություն:

- Էմպիրիկ՝ դիտարկում, ուսանողների անկետավորում, թեստավորում, հարցում
- /հայտորոշիչ և ստուգիչ/, փորձարարական ուսուցում, մոդելավորում:
- Վիճակագրական՝ թեստավորում, փորձարարական ուսուցման արդյունքների քանակական և որակական տվյալների մաթեմատիկական վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ.

- Մշակվել է «Մանկավարժական դիզայն» առարկայի հատուկ հայեցակարգը և դասընթացը:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մշակվել է «Մանկավարժական դիզայն» առարկայի ուսուցման մեթոդական համակարգը:
- Մշակվել է «Մանկավարժական դիզայն» առարկայի միջոցով ուսանողների մասնագիտական որակների ձևավորմանն ուղղված մանկավարժի գործունեության մոդելը:
- Սահմանվել են մանկավարժական դիզայնի ուսուցման սկզբունքներն ու տեխնիկա-տեխնոլոգիական առանձնահատկությունները:
- Սահմանվել են դիզայներական տեխնոլոգիաների կիրառման գործընթացում ուսանողների գեղարվեստաստեղծագործական կարողությունների ձևավորվածության մակարդակներն ու դրանք որոշող չափանիշներն ու

ցուցանիշները:

Հետազոտության տեսական նշանակությունը արտահայտված է.

- Հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, արվեստագիտական տեսությունների համակարգային մոտեցումներով գեղարվեստաստեղծագործական կարողությունների ձևավորման գործընթացում:
- Սահմանվել են Մանկավարժական դիզայն առարկայի դասավանդման խնդիրները:
- Մշակվել են գեղարվեստական կրթության ֆակուլտետում մանկավարժական դիզայն առարկայի տեսագործնական ուսուցման մանկավարժական, մեթոդական նոր մոտեցումներ, որոնք կհարստացնեն գեղարվեստական կրթությունը տեսական, մեթոդաբանական և մեթոդական նոր դրույթներով:

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ հետազոտության արդյունքները կարող են՝

- կիրառվել գեղարվեստական կրթության այլ կրթօջախներում,
- ընդգրկվել գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսումնական ծրագրերում,
- օգտագործվել դասախոսների և ուսուցիչների գեղարվեստական նախագծման և նրանց մասնագիտական իրազեկությունների մակարդակի բարձրացմանն ուղղված վերապատրաստումների գործընթացում,
- մշակված մեթոդական համակարգը գործնական օգնություն կլինի դիզայն առարկան դասավանդողներին և մեթոդական ուղեցույցների կազմման համար:

Հետազոտության կազմակերպումը կայացվել է երեք փուլերով. /2023-2026թթ./

Հետազոտութան որոնողական, ուսուցողական և վերահսկող մանկավարժական փորձերն իրականացվել են Երևանի Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գեղարվեստական կրթության ֆակուլտետում, Մ. Մաշտոցի անվան համալսարանի «Դիզայն» բաժնում: Գիտափորձին մասնակցել են 2-3 կուրսերի թվով 72 ուսանողներ:

Առաջին փուլում (2023-2024թթ.) Ուսումնասիրվել ու տեսական վերլուծության են ենթարկվել հետազոտության հիմնախնդրին վերաբերվող գիտական աղբյուրներ, բացահայտվել է հիմնահարցի մշակվածության աստիճանը, մշակվել է հետազոտության գիտական ապարատը:

Երկրորդ փուլում (2024-2025թթ.) քննության են առնվել դիզայն առարկայի և գեղարվեստական կրթության այլ գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման տեսությունը և պրակտիկան:

Երրորդ փուլում (2025-2026թթ.) շարունակվել են փորձարարական աշխատանքները, ստուգվել և հիմնավորվել է դիզայն առարկայի ուսուցման առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը: Կատարվել են մանկավարժական փորձարարության արդյունքների վերլուծություն, ընդհանրացում, ատենախոսության ձևավորում և վերջնական խմբագրում:

Պաշտպանության ներկայացվող հայեցակարգային դրույթները.

- Մանկավարժական դիզայն առարկայի ուսուցման միջոցով ուսանողների մասնագիտական որակների ձևավորմանն ուղղված մանկավարժի գործունեության մոդելի ձևավորումը:
- Գեղարվեստական նախագծման գործընթացի մեթոդական համակարգի հենքային իրազեկությունը:
- Մանկավարժական դիզայն առարկայի ուսումնական առաջադրանքների մշակմանը նպաստող մեթոդական համակարգի ամբողջությունը:
- Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողների ինտեգրատիվ մոտեցման հիման վրա դիզայն առարկայի դասավանդման մեթոդական համակարգի մշակման գործընթացը:
- Դիզայն առարկայի վերաբերյալ գիտելիքների հաղորդման և դրանց հիման վրա գեղարվեստական նախագծումների տարաբնույթ մեթոդների, տեխնիկաների և տեխնոլոգիաների համադրումը:

Հետազոտության արդյունքները ներդրվել և փորձարկվել են՝ ՀՊՄՀ գեղարվեստական կրթության կերպարվեստի ամբիոնում, Մ.Մաշտոցի անվան, համալսարանի դիզայն բաժնում: Ստացված արդյունքների հավաստիությունն ու հուսալիությունը ապահովված են ընտրված մեթոդաբանական հիմքերով, մանկավարժական մոտեցումներով օգտագործված մեթոդներով, ուսումնասիրված գիտափորձերին մասնակցած դասախոսների թվաքանակով, տվյալների որակական և քանակական վերլուծություններով:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ապահովվել է աշխատանքի մեթոդաբանության հիմնարար դրույթներով, որը հիմնավորվել է ինչպես տեսականորեն, այնպես էլ հավաստող (արձանագրող, ձևավորող) և ստուգիչ գիտափորձերի համալիր վերլուծությամբ, ուսանողների տարիքային, անհատական և գեղարվեստամանկավարժական առանձնահատկությունների համարժեք հաշվառման պայմաններում:

Հետազոտության ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, 108 անուն գրականության ցանկից և հավելվածից: Այն ներառում է 1 մոդել, 4 աղյուսակ, 6 գծապատկեր, 6 տրամագիր:

Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 132 էջ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտությունը կազմված է «Ներածությունից» և երկու գլուխներից: «Ներածության» մեջ հիմնավորված է թեմայի հրատապությունը, ցույց է տրված հետազոտության մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, ձևակերպված են գիտական վարկածը, նպատակին հասնելու համար լուծված խնդիրները, մեթոդաբանական հիմքը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական

նշանակությունը, հետազոտության հավաստիությունը, հիմնավորվածությունն ու բազան, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, ատենախոսության փորձարարական հիմքը։

Ատենախոսության առաջին՝ «Դիզայն դասընթացի գիտատեսական-մեթոդաբանական հիմքերը ԲՈՒՀ-ում» խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից։

Առաջին ենթագլխում՝ «Դիզայնի առաջացման սոցիալ-մանկավարժական պայմանները և ժամանակագրությունը», բացահայտվել և հիմնավորվել են դիզայն առարկայի ձևավորման և զարգացման պատմական նախադրյալներն ու փուլերը տարբեր երկրներում և Հայաստանում։ Քննարկվում են դիզայնի տարատեսակները համապատասխան բնագավառներում, դրանց առաջացման սոցիալ-մշակութային պայմանները, դիզայների գեղարվեստաստեղծագործական գործունեության ձևավորման և զարգացման առանձնահատկությունները, ճշտելով հասարակության գեղարվեստական պահանջմունքների ձևավորման որոշ բնութագրեր։

Երկրորդ ենթագլխում՝ «Դիզայնի ուսուցման մանկավարժահոգեբանական պայմանները», վերլուծվել են դիզայնի ուսուցման հոգեբանական և գեղարվեստամանկավարժական գործունեությունը սահմանող այն բնութագրերը, որոնք ամենից առաջ հենված են բարոյագիտական, գեղագիտական, ազգային գաղափարների վրա։ Հաշվի առնելով ասվածը, ենթագլխում քննարկման է ներկայացվում գեղարվեստական ուղղվածություն ունեցող «Մանկավարժական դիզայն» առարկայի դասավանդմանն ավելի հիմնավոր մանկավարժական մոտեցումներ ցուցաբերելը։ Ուսումնական գործընթացի նպատակադրումը պետք է իրագործվի գեղարվեստական կրթության բնագավառում, մանկավարժական դիզայն դասընթացի արդյունավետ մեթոդիկայի մշակմամբ՝ հայեցակարգային ծրագրերին համապատասխան։

Երրորդ ենթագլխում՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մանկավարժական դիզայնի ուսուցման գործընթացում», բնութագրվել են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը, որն ի վիճակի է կրթել ու ձևավորել այնպիսի անհատների, որոնք կկարողանան նպաստել կրթության որակի բարձրացմանը։ Վերհանված է տեղեկատվական տեխնոլոգիաների կարևոր դերը, փոխելով ուսուցչի գործունեության արդյունավետությունը։ Այն կդառնա ուսանողների ակտիվ և իմաստավորված աշխատանքների նոր ձևատեսություն, ինչը պարապմունքները կդարձնի ավելի դիտարժան, դյուրին և հետաքրքիր, կբարձրացնի ստեղծագործական ավյունը, կնպաստի գիտելիքների, հմտությունների և կարողությունների կայուն յուրացմանը։

Ատենախոսության՝ «ԲՈՒՀ-ում «Մանկավարժական դիզայն» առարկայի դասավանդման մեթոդների փորձարարական հիմնավորումը» խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից։

Առաջին ենթագլխում՝ «Մանկավարժական դիզայնի հայեցակարգային

հիմնավորումը», սահմանվել է մանկավարժական դիզայնը, որպես գեղարվեստական կրթության անքակտելի բաղադրամաս, որպես XX դարասկզբից գոյություն ունեցող երևույթ, որը ժամանակին զուգընթաց առավել ցայտուն է դրսևորում իր գործնական կարևորության աստիճանը՝ ելնելով մասնագիտական արդի պայմաններին համապատասխան պատրաստվածություն հաղորդելու սկզբունքայնությունից: Դիտարկված են ապագա ուսուցչի մասնագիտական զարգացման նպատակը, տեսական և գործնական տեսանկյունով նրա գեղարվեստանախագծային ստեղծագործական ներուժի զարգացումը:

Հայեցակարգը արտացոլում է.

- Մանկավարժական դիզայնի հիմնական նպատակը,
- Ծրագրի կառուցվածքային հիմնական սկզբունքները,
- Մանկավարժական դիզայնի ուսուցման մեթոդները, ուսուցման ձևերը,
- Դասընթացի իրականացման մանկավարժական պայմանները,
- Մանկավարժական դիզայն դասընթացի ծրագրային բովանդակությունը,
- Մանկավարժական դիզայն դասընթացի միջոցով լուծվող խնդիրները:

Երկրորդ ենթագլուխը՝ «Մանկավարժական դիզայն առարկային ներկայացվող մոդելի իրականացման գեղարվեստամանկավարժական պայմանները»

Սահմանվել է «մոդել» հասկացությունը: Քննարկվել են առարկայի դասավանդման տեսական և մեթոդական դրույթները, մանկավարժական դիզայնի ուսուցման միջոցով ուսանողների մասնագիտական որակների ձևավորմանն ուղղված մանկավարժի գործունեության մոդելը:

Երրորդ ենթագլուխը՝ «Հարթապատկերային և ծավալատարածական ձևերի հորինվածքային լուծումները մանկավարժական դիզայնում», բովանդակում է մանկավարժական դիզայնում կարևոր գործառույթ իրականացնող հարթապատկերային մտածողություն՝ դեկորատիվ հորինվածքի ստեղծման, կառուցողական, ստեղծագործական և ուսանողների մասնագիտական կարողությունների ձևավորման արժեքային համակարգի զարգացման նպատակով առաջադրված մեթոդներ և առաջադրանք - վարժություններ:

Դասընթացի համատեքստում ծավալային ձևեր բովանդակային առանձնահատկությունները, ծավալատարածական հորինվածքային մտածելակերպի օրինաչափությունները և օրգանական կապը «Հարթապատկերային գրաֆիկական ձևերը դիզայնում» թեմայի հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լիարժեք մասնագետ պատրաստելու համար մանկավարժական դիզայն դասընթացում վերոնշյալ երկու բաղադրիչներն ունեն համաչափելի նշանակություն՝ միմյանց լրացնող և դասընթացն արժևորող, անհրաժեշտ ենք համարում ավելացնել, որ ծավալային ձևը, կամ պարզապես տարածական տեսքն առանձնանում է խորության մեջ գերակշռող տեղաշարժով այլ կոորդինատային ուղղությունների առկայության դեպքում:

Մանկավարժական դիզայնի միջոցով ուսանողների մասնագիտական որակների ձևավորմանն ուղղված մանկավարժի գործունեության մոդելը

Գծապատկեր №1

Ուսանողների մասնագիտական որակների ձևավորմանն ուղղված դասախոսի գործունեության ոլորտները

Կրթական ոլորտ

- Մասնագիտական համապատասխան տեղեկատվության կուտակում մանկավարժական դիզայնի պատմությունից, տեսությունից և ուսուցման մեթոդիկայից։ - Գործնական առաջադրանքների կատարում մանկավարժական դիզայնի տարրերով։ - Ընտրովի դասընթացների մշակում և անցկացում մանկավարժական դիզայնի տեխնոլոգիաների կիրառմամբ։

Հաղորդակցական ոլորտ

- Ուսանողների նպատակային հարաբերությունների հաստատում։ - Մանկավարժական դիզայն առարկայի նկատմամբ կրթական և ճանաչողական դրական վերաբերմունքի ձևավորում։ - Բարենպաստ հարաբերությունների հաստատման նպատակով մանկավարժական դիզայնի մասնագիտական հնարավորությունների օգտագործում։

Կազմակերպչական ոլորտ

- Ուսանողների ճանաչողական գործունեության կազմակերպումը մանկավարժական դիզայն առարկայի որակների ձևավորման համատեքստում։ - Ապագա նկարիչ-մանկավարժի մասնագիտական որակների ձևավորումը անհատական և խմբային գործունեության կազմակերպման միջոցով։ - Ուսանողների գեղ. գործունեության կազմակերպում արտաուսումնական ձևաչափով /մրցույթներ, ցուցադրույթներ, անհատական դիզայներական նախագծերի պաշտպանություն/։

Ուսումնադաստիարակչական ոլորտ

- Մանկավարժական դիզայնի ազդեցությունը ուսանողների մասնագիտական որակների վրա։ - Ուսանողների գեղարվեստական աշխարհայացքի ձևավորումը նրանց հետաքրքրությունների, պահանջմունքների, կարողությունների համատեքստում։ - Ուսանող-նկարիչների մոտ ինքնակրթության, մասնագիտության նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում։

Չորրորդ ենթագլխում՝ «Մանկավարժական դիզայնի ուսուցման մշակված մեթոդիկայի արդյունավետության ստուգումը և արդյունքների վերլուծությունը», 2023-26 թթ. մեր կողմից անցկացված փորձարարական աշխատանքը նպատակ ուներ ապացուցելու, որ բացահայտված և տեսագործնական հիմնավորում ստացած մանկավարժական պայմանները զգալի չափով նպաստում են գեղարվեստական կրթության ֆակուլտետների բակալավրիատի 2-3-րդ կուրսերի ուսանողների մասնագիտական կարողությունների՝ դիզայներական գործունեության արդյունավետության բարձրացմանը, օժանդակում են նրանց մոտ ճանաչողական պահանջմունքների և մանկավարժական գործունեության ակտիվացմանը։

1. Փորձարարության նպատակին համապատասխան դրվել են հետևյալ խնդիրները. Փորձարարական խմբերի որոշում
2. «Մանկավարժական դիզայն» առարկայի հայեցակարգային ծրագրի կիրառում
3. Գիտափորձի նպատակին համապատասխանող առաջադրանքների մշակում
4. Ուսանողների կրթական գործունեության կազմակերպման և վերահսկման արդյունավետ մեթոդների ընտրություն
5. Ապագա ուսուցիչների ուսումնական գործունեության արդյունքների վերլուծություն, մանկավարժական դիզայն առարկայի դասավանդման մեթոդների կիրառմամբ։

Նախապես պետք է նշել, որ փորձարարությունում ստուգողական խմբերի բացակայությունը հիմնավորվում է նրանով, որ «մանկավարժական դիզայն» դասընթացը իր բովանդակությամբ նոր է և չունի համանմանություններ կամ նախատիպեր, որպես գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսումնական դասընթաց (մանկավարժական դիզայն դասընթացի ծրագրային բովանդակությունը երկամյա ուսուցման կտրվածքով 2-3-րդ կուրսեր), Ուստի մանկավարժական գիտափորձի ընթացքում ուսանողների դիզայներական գործունեությունը նոր ծրագրով կողմնորոշված էր ինտեգրված ուսուցման ավելի ամբողջական իրականացմանը՝ համակցված դիզայներական վերլուծական - երևակայական կողմնորոշմամբ, դեպի գործնական նախագծային ստեղծագործական գործունեություն։

Փորձարարական ուսուցման գործընթացում կարևորվել է աշխատանքի կատարման փուլայնության սկզբունքը, հնարավորություն ընձեռելով ուսանողներին վճռելով առաջադրանքի հիմնական խնդրի լուծման հերթագայումը՝ նախագծի օրինաչափությունները, արտահայտչամիջոցները, տեխնիկական հնարքները։ Տվյալ փուլում առանձնակի կարևորվում է ուսանողի ստեղծագործական երևակայությունը և գործնական կիրառելիությունը։

Այս առումով էլ հանձնարարությունները ուղղված են եղել.

- դիտելու և ընկալելու ընդունակությունների ձևավորմանը
- պատկերային ընդունակությունների զարգացմանը
- պատկերային մտածողության կայացմանը (վերլուծմանը)
- պատկերի վերջնական վերարտադրմանը։

Դիզայներական նախագծերում կառուցվածքային գեղարվեստական բաղադրամասերը

Գծապատկեր №2



Մանկավարժական դիզայնի մեջ օրինաչափությունների յուրացումն ինքնանպատակ չէ, այն պատրաստի դեղատոմսեր չի տալիս «գեղարվեստական ստեղծագործությունների արտադրության» համար, բայց օգնում է գիտակցաբար ուղղորդել ստեղծագործական գործընթացը, զգայական ընկալումը կապել վերլուծական ընկալումների հետ, բացահայտել մտահղացումից մինչև պատկերային մտածողության ձևավորման հնարավոր ուղին 2-րդ և 3-րդ կուրսերում անցկացված փորձարարական առաջադրանքների ամբողջությունը թույլ տվեց առավել մանրամասնորեն ուսումնասիրել սովորողների դիզայներական գործունեության մեխանիզմի բաղադրամասերը:

Դիզայներական նախագծումներում կառուցվածքային գեղարվեստական բաղադրամասերի ձևավորման մակարդակները

Աղյուսակ № 1

II-III կուրսեր		Բաղադրամասեր											
		Գեղարվեստ ական ընկալում			Պատկերային հիշողություն			Պատկերային մտածողություն			Պատկերային Վերարտադրողա-կանություն		
		Մակարդակներ											
		Բ.	Մ.	Ց.	Բ.	Մ.	Ց.	Բ.	Մ.	Ց.	Բ.	Մ.	Ց.
Ուսանողների քանակը %	Արձանագրող	26	38	36	22,5	38,5	39	22	44	34	20	44	36
	Ձևավորող	36	40	24	36	42	22	36,5	43	20,5	32	48	20

Այսպիսով փորձագիտությանը մասնակցող յուրաքանչյուր խումբ ուսանողի համար ստացված արդյունքների քանակական և որակական վերլուծության հանրագումարն է դարձել նրանց դիզայներական գործունեության ձևավորվածության մակարդակի գնահատականը: Յուրաքանչյուր խմբի տվյալների ընդհանրացումը հնարավորություն է տվել կազմելու գծապատկերներ, որոնցում արտացոլվել է ուսանողների դիզայներական գործունեության ձևավորվածության բարձր, միջին և ցածր մակարդակ ցուցաբերած տոկոսային հարաբերակցությունը: (գծապատկեր 3)

Դիզայներական նախագծումներում գեղարվեստական բաղադրամասերի ձևավորման շարժը



Տրամագիր №1

Դիզայներական մտածողության մակարդակները 2-3-րդ կուրսերում

Գծապատկեր №3

Գեղ. նախագծման չափանիշները	Կերպարային մտածողության զարգացման մակարդակները		
	բարձր	միջին	ցածր
Նորույթ	Հաջողվել է նախագծում հանդես բերել անհատական մտածողություն, որն արտահայտված է հորինվածքային լուծումներով	Ստեղծագործական միջոցների կիրառումը թույլ է տալիս նկատել թեմայի բացահայտումը, չնայած նախագծում թույլ է արտահայտված ընդհանուր տպավորությունը	Նախագծում բացակայում է նորույթը
Կերպարի բացահայտում	Հասցված է նմանության	Նմանությունը ստացված է	Ընդհանուր մոտեցում կա,բայց թեման ավարտուն չէ
Ամբողջականություն	Աշխատանքը հասցվածէ ամբողջականության, կերպարի բացահայտման	Հասցված է հորինվածքային ամբողջականության, սակայն որոշ տարրեր ստեղծում են աղճատվածություն	Գլխավորը երկրորդականից չտարբերակելը, կորցրել է տպավորության ամբողջականությունը
Արտահայտչականություն	Արտահայտչական միջոցները համապատասխանում են նախագծի ձևին և բովանդակությանը	Նախագծի որոշ բաղադրամասեր չեն համապատասխանում ընդհանուր բովանդակությանը	Նախագծում առկա է արտահայտչամիջոցների ընտրության և կիրառման խառնաշփոթությունը
Դիզայներական աշխատանքում ստեղծագործական յուրահատուկի (անհատականի) առկայությունը	Գտնված է «անհատականության գլխավոր գաղափարը»՝ ընդհանուր տրամադրությունը	Նախագծման ընդհանուր առանձնահատկությունը արտացոլված է, բայց թեմայի ընդհանուր մեկնաբանությունը համոզիչ չէ	Թեմայի բնութագիրը լիարժեք չէ (ձև և բովանդակություն)
Կատարման միջոցների ենթակայությունը գեղ. նախագծում	Հորինվածքային և գունատոնային լուծումները համապատասխանում են գաղափարին	Նկատելի է հորինվածքի և գունային լուծումների աններդաշնակություն	Հորինվածքի և գունատոների ընտրությունը լիարժեք չեն նպաստում թեմայի բացահայտմանը
Կատարման տեխնիկան և տեխնոլոգիան	Աշխատելու ընտրված տեխնիկան, կիրառման տեխնոլոգիան համապատասխանում են նախագծումների չափորոշիչներին	Նախագծային առանձին բաղադրատարրերի կատարումը չի համապատասխանում ընդհանուր գեղարվեստական ոճին	Կատարման տեխնիկայի ընտրությունը ոչ լիովին է համապատասխանում թեմային

Տվյալների մաթեմատիկական մշակումը և դրանց համեմատումը թույլ տվեցին հետևության, որ բոլոր գնահատականների միջին արժեքները փորձի ավարտի պահին արձանագրված ցուցանիշները նշանակալիորեն գերազանցում են փորձի սկզբնական փուլում արձանագրվածներին (տրամագիր 6)

Ձևավորող փորձի ավարտը հաստատել է մանկավարժական դիզայնի ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների ինտեգրատիվ մոտեցման արդյունավետությունը, որպես գեղարվեստական նախագծումների ամբողջական պատկերացման, գիտելիքների ամբողջականության, մանկավարժական դիզայնի ուսուցման կարողությունների ու հմտությունների ձևավորման, կերպարային մտածողության զարգացման միջոց, որն ուղղորդում է ուսանողներին ստեղծագործական մոտեցման ապագա մանկավարժական գործունեության արդյունավետացմանը:

Փորձարարական ուսուցման ժամանակահատվածում կատարված ուսանողների աշխատանքները՝ երկրորդ և երրորդ կուրսերում գնահատվել են ըստ համապատասխան մշակված չափանիշների:

Կատարված աշխատանքների արդյունքների տվյալները գիտափորձի արձանագրող փուլում (%) 2023-2024 թթ.



Տրամագիր №2

Ձևավորող խմբի ձեռքբերումների մակարդակը փորձարարական ուսուցման ավարտին կազմում էր 46%, համեմատած սկզբնական փուլի հետ (մինչ այդ մակարդակը 21% էր)։

Ձևավորող փուլի ուսուցման արդյունավետությունը որոշարկված ուսանողական նախագծերի գնահատման կտրվածքով (%) 2025-2026 թթ.



Տրամագիր №3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եզրակացությունում ընդհանրացվում է ուսումնասիրության փորձը, շարադրվում են հետևությունները, ձևավորվում են մանկավարժական «դիզայն» առարկայի դասավանդման մեթոդները ԲՈՒՀ-ում։

Արդյունքները, որոնք ստացվել են մանկավարժական գիտափորձի ընթացքում ուղղված ուսումնասիրության վարկածի և դրանով պայմանավորված՝ մանկավարժական դիզայն դասընթացի օգտագործմամբ ուսուցման մոտեցումներին տիրապետող նկարիչ-մանկավարժի մասնագիտական պատրաստվածության գիտամանկավարժական և մեթոդական հիմքերի հաստատմանը, թույլ տվեցին հաստատել ուսումնասիրության վարկածը։

- Ուսումնասիրության վարկածի ստուգումը հիմնավորեց, որ մանկավարժական «դիզայն» առարկայի դասավանդման մեթոդները

ԲՈՒՀ-ում կլինեն ավելի արդյունավետ, եթե ուսումնական գործընթացում օգտագործվի ինտերակտիվ մոտեցումը, իսկ տարբեր առարկայախմբերի ինտեգրումը և դրա հիման վրա ուսանողների կողմից դիզայն առարկայի դասավանդման մեթոդների համալիր մշակումը կպայմանավորի նրանց մասնագիտական ունակությունների դրսևորումը:

- Ապագա նկարիչ-մանկավարժին դիզայն առարկայի դասավանդման մեթոդների ուսուցման արդյունավետությունը ապահովում է ուսումնառության ընթացքում գիտականորեն հիմնավորված մեթոդական համակարգը, որը ներառում է.
- Ներառարկայական բովանդակություն, մանկավարժական «դիզայն» առարկայի դասավանդման ժամանակակից տեխնոլոգիաներ և մեթոդներ:
- Գեղարվեստական նախագիծ-պատկեր ստեղծագործական առաջադրանքների ամբողջականություն՝ նախատեսող հատուկ գիտելիքների, կարողությունների, հմտությունների լայն շրջանակ, ուղղված ուսանողների մտավոր գործունեության խթանմանը:

Տրված ուսումնասիրության մեջ մշակված և փորձնական աշխատանքի ընթացքում ստուգված կերպարվեստի ուսուցիչների հատուկ նախապատրաստման մեթոդական համակարգը հնարավորություն է տալիս նկարիչ-մանկավարժներին մանկավարժական «դիզայն» առարկայի դասավանդման մեթոդների մշակման և ուսուցման խնդիրները արդյունավետ լուծել պատկերագրման ինտերֆեյսի գեղարվեստական ձևավորման օրինակով և հասնել ուսումնական գործընթացի և ուսանողների ստեղծագործական գործունեության իրականացման բարձր արդյունավետությանը:

Սույն ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել նաև լրացուցիչ կրթության համակարգում, դպրոցներում վարժարաններում:

Թեկնածուական ատենախոսության թեմայի վերաբերյալ հրատարակվել են հետևյալ գիտական հոդվածները.

1. **Մելիքսեթյան Գ.Վ.** Դիզայներական դրսևորումները Ուրարտական նյութական մշակույթում, հայագիտական հանդես № 1 (72), Երևան, 2026 թ. էջ 94-106:
2. **Meliksetyan Gor.** THE PSYCHOLOGICAL MEANING OF COLOR IN DESIGN. MIOPAP Scientific Periodical vol.12 No.1. Yerevan., 2025, p.6-28.
3. **Meliksetyan Gor.** SOCIO-PEDAGOGIC CONDITIONS OF DESIGN ORIGINATION. MIOPAP Scientific Periodical vol.10 No.1. Yerevan., 2023, p.68-75.
4. **Մելիքսեթյան Գ.Վ.** Ժամանակակից դիզայներական գործունեության առանձնահատկությունները: «Գիտական տեղեկագիր» №1 (44), Երևան., 2023, էջ 159-169:
5. **Մելիքսեթյան Գ.Վ.** Մոնումենտալ արվեստը Հայաստանում (Կոթողային արվեստ, որմնանկարչություն): «Հայագիտական հանդես» №2 (61), Երևան., 2023, էջ 98-107:

6. **Մելիքսեթյան Գ.Վ.** Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում: «Մանկավարժական միտք» 2023/1-2, Երևան, էջ 149-156:
7. **Մելիքսեթյան Գ.Վ.** Ինովացիոն տեխնոլոգիաների կիրառումը «Համաշխարհային գեղարվեստական մշակույթ» դասընթացում: «Հայագիտական հանդես» №3 (52), Երևան., 2021, էջ 136-144:
8. **Մելիքսեթյան Գ.Վ.** Զարդարվեստը որպես մատենական նկարչության հիմնական միջոց: «Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես» №2 (13), Երևան., 2021, էջ 21-26:
9. **Մելիքսեթյան Գ.Վ.,** Ծավալային ձևերը Դիզայնում (ձևատեսական ցուցումներ): «Լուսաբաց» հրատ. Երևան., 2023, 38 էջ:
10. **Մելիքսեթյան Գ.Վ., Ներսիսյան Լ.Ս.** Նկարել սովորելու գաղտնիքը (մեթոդական ցուցումներ): «Մեկնարկ» հրատ. Երևան., 2019, 94 էջ:

Меликсетян Гор Ваганович

МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ ДИСЦИПЛИНЫ «ДИЗАЙН» В ВУЗЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 «Методы преподавания и обучения» (Изобразительное искусство). Защита диссертации состоится 21 мая 2026 года в 12:00 на заседании специализированного совета «Педагогика» 020 Комитета по Высшему Образованию и Науке при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна. Адрес: 0010, Ереван, ул. Тиграна Меца, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В основе данного исследования лежат актуальные вопросы развития методологии преподавания «Дизайна» в сфере художественного образования, их методологическое и технологическое значение. Подчеркивая актуальность темы, предпринята попытка выявить трудности в области визуально-практических и художественно-творческих подходов к дизайну в сфере художественного образования, разработать комплекс форм, методов, средств и технологий обучения, направленных на развитие художественного дизайна, знаний, умений, навыков, а также определить методическую систему для его эффективного применения. Исходя из необходимости формирования дизайнерских навыков будущих художников-педагогов, считаем, что актуальность данного исследования обусловлена следующими факторами:

1. Необходимостью включения специально переработанного курса «Педагогический дизайн» в программы бакалавриата и магистратуры факультета «Художественное образование» АГПУ.
2. Необходимостью построения методической модели курса дизайна (далее –

педагогический дизайн) в рамках художественного образования, которая будет способствовать эффективному формированию дизайнерских навыков студентов педагогических ВУЗ-ов.

Цель исследования – разработка эффективной методологии курса «Дизайн» в области художественного образования.

Задачи – Изучение и анализ существующих исследований и соответствующих научных источников по данной теме, опыта художественных учебных заведений, классических и современных информационных технологий в дизайне и различных компьютерных программ.

- Разработка и внедрение в образовательный процесс методической модели формирования визуальных и практических навыков студентов с использованием дизайнерских технологий.
- Разработать эффективные методы организации и проведения занятий по педагогическому дизайну: художественное проектирование и трехмерное моделирование.
- Провести анализ принципов, методов и организационных форм обучения дизайну и разработке графических интерфейсов.
- Провести педагогический эксперимент, обосновая эффективность разработанной методической модели предмета «Педагогический дизайн» в сфере высшего образования на основе полученных результатов.

Научная новизна исследования заключается в том, что:

- Разработан специальный курс по предмету «Педагогический дизайн».
- Разработана методическая модель обучения предмету «Педагогический дизайн» с использованием информационных технологий.
- Разработаны эффективные методы организации и проведения занятий по предмету
- «Педагогический дизайн»: художественное проектирование или трехмерное моделирование.
- Установлены принципы и технико-технологические особенности обучения педагогическому дизайну.
- Установлены уровни формирования художественных и творческих способностей студентов в процессе применения технологий проектирования, а также критерии и показатели, определяющие их.

Теоретическая значимость исследования выражена:

- В процессе формирования художественно-творческих способностей с использованием систематических подходов философских, психологических, педагогических и искусствоведческих теорий к проблеме.
- Установлены проблемы преподавания предмета «Педагогический дизайн».
- Разработаны новые педагогические и методические подходы к теоретико-

практическому преподаванию предмета «Педагогический дизайн» на факультете художественного образования, которые обогатят художественное образование новыми теоретическими, методическими и методологическими положениями.

Практическая значимость исследования обусловлена тем, что его результаты могут:

- применяться в других учебных заведениях художественного образования,
- быть включены в учебный план факультета художественного образования,
- использоваться в процессе подготовки преподавателей художественного дизайна и повышения их профессиональной компетентности,
- разработанная методология станет практическим пособием для преподавателей предмета
- «Дизайн» и для составления методических рекомендаций.

Объём и структура диссертации. Диссертация объёмом 132 страниц (без приложений) компьютерного текста состоит из введения, двух глав, заключения, библиографии и приложений. В ней содержатся 4 таблиц, 6 диаграмм, 5 графических изображений, 22 рисунка.

MELIKSETYAN GOR VAHAN

METHODOLOGY OF TEACHING DESIGN IN HIGHER EDUCATION INSTITUTIONS

Dissertation submitted for the degree of Candidate of Pedagogical Sciences in the speciality 13.00.02 - Methodology of Teaching and Education (Specialty: Fine Arts)

The defense of the dissertation will take place on May 21, 2026, at 12:00 at a meeting of the Specialized Council 020 'Pedagogy' of the Committee for Higher Education and Science at the Kh. Abovyan Armenian State Pedagogical University.

Address: 17 Tigran Mets St., Yerevan 0010, Republic of Armenia.

SUMMARY

Relevance of the Study: This Study is based on contemporary issues related to development of the methodology for teaching "Design" in the field of art education, including their methodological and technological interpretation.

Emphasizing the relevance of the topic, this Study seeks to identify the existing challenges in theoretical–practical and artistic–creative approaches to design within art education, to develop a comprehensive set of teaching forms, methods, and technologies aimed at fostering artistic design, knowledge, abilities, and skills, and to establish a methodological system for their effective implementation. Arising from the need to develop the design capacities of future artist-educators, we find that the relevance of this Study is determined by the following:

1. The demand to include the specially revised course on ''Pedagogical design'' in the undergraduate and graduate curricula of the Faculty of Art Education at Armenian State

Pedagogical University;

2. The need to develop a methodological model for the ‘’Design’’ course (hereinafter referred to as ‘’Pedagogical Design’’) within the framework of art education, which will contribute to the effective development of the design capacities of students in the pedagogical higher education institution.

The purpose of the study: Development of effective methodology for "Design" course in the field of art education.

Tasks: To examine and analyse existing studies and relevant scientific sources on the subject, the practices of art education institutions, classical and contemporary design information technologies, and modern computer-based three-dimensional programmes;

- To develop and implement a methodological model for enhancing students’ theoretical and
- practical capacities through the application of design technologies in the teaching process;
- To develop effective methods for organising and conducting pedagogical design activities, including art design projects and three-dimensional modeling;
- To conduct analyses of the principles, methods, and approaches for organising the teaching of design and the development of graphical interfaces;
- To conduct a pedagogical scientific experiment for substantiation of the effectiveness of the developed methodological model for the ‘’Pedagogical Design’’ subject in higher education.

The scientific novelty of the study lies in the following:

- A special course on subject "Pedagogical design" was developed;
- A methodological model for teaching the subject "Pedagogical design" through application of information technologies was elaborated;
- Effective methods for organising and conducting pedagogical design activities, including art design projects and three-dimensional modeling were developed;
- The principles and technical-technological specifics of teaching pedagogical design were established;
- The levels of development of students’ artistic and creative capacities in the process of applying design technologies, along with the criteria and indicators determining them were established;

The theoretical significance of the study is reflected in:

- The process of developing artistic and creative capacities through systematic approaches to the issue, drawing on theories from philosophy, psychology, pedagogy and art history;
- The tasks for teaching "Pedagogical design" were established;
- New pedagogical and methodological approaches for theoretical and practical teaching of pedagogical design in the Faculty of Art Education were developed, enriching art

education with new theoretical, methodological and methodical provisions.

The practical significance of the study lies in that the findings of the study may:

- be applied in other art educational institutions;
- be included in the curricula of the Faculty of Art Education;
- be used in the training of lecturers and teachers to enhance their awareness of art design and improve their professional skills.

The developed methodology will serve as a practical tool for educators teaching the ''Design'' subject and for the compilation of methodological guides.

The volume and structure of the dissertation. The thesis of 132 pages (without attachments) of the computer text consists of an introduction, three chapters, conclusion, bibliography and attachments. It contains 4 tables, 6 diagrams, 5 graphics, 22 pictures.